

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈԶԱՔԵԿՅԱՆ



Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Եղիշի Խոչաբեկյանը Հայաստանում, ԱՊՀ երկրներում և նրա սահմաններից դուրս լայն ճանաչում ստացած անվանի տնտեսագետ գիտնականներից է: Նա անցել է բեղմնավոր կյանքի ուղի, հինգ տասնամյակ գրադարձում է տնտեսագիտական կադրերի դաստիարակման գործով: Վ. Խոչաբեկյանը ծնվել է 1929 թ. մարտի 2-ին Հայաստանի Հանրապետության Վարդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1946 թ. ավարտել է Վարդենիսի միջնակարգ դպրոցը: 1954 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Մեկ տարի անց ընդունվել և 1959 թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի ասպիրանտուրան՝ տնտեսագիտության գծով: Տնտեսագիտության թեկնածուի գիտական թեզը պաշտպանել է 1963 թ., դոկտորականը՝ 1975 թ.: 1966 թ. ստացել է ավագ գիտաշխատողի, 1977 թ. պրոֆեսորի գիտական կոչումներ: 1982 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1994 թ.՝ ակադեմիկոս, 1999 թ.՝ Ազգային անվտանգության հիմնահարցերի գծով Գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Վ. Խոչաբեկյանը մեծ ավանդ ունի հայրենական տնտեսագիտության զարգացման գործում: Նրա բազմաթիվ մենագրությունները, հարյուրավոր հոդվածները և այլ աշխատություններ (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով) լրաց են ընծայվել Երևանում, Մոսկվայում, Վիեննայում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում, Դելիում, Թեհրանում, Վիեննայում, Թրիլիսիում և այլուր՝ նրան բերելով արժանի ճանաչում մի շարք արտասահմանյան երկրներում: 1970-ականներից ի վեր նա գիտական բանախոսություններով Հայաստանում և արտասահմանի բազմաթիվ երկրներում հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Վ. Խոչաբեկյանի առաջին աշխատությունները (1950-ականների վերջերից) նվիրված են աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, ներարտադրական ռեզերվների բացահայտմանը և գնահատմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվների ի հայտ բերմանը և օգտագործմանը: 1960-ական թվականների կեսերից Հայաստանի բնակչության և նրա աշխատանքային ռեսուրսների վերաբերադրության հիմնահարցերը դարձնում են տնտեսագիտության և իր՝ Վ. Խոչաբեկյանի ուսումնասիրությունների առանցքային խնդիրներից մեկը և այսօր էլ մնում են այդպիսին: Ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսեռման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա Վ. Խոչաբեկյանը կանխատեսել է

Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Դրանք մասնավորապես ընդգրկում են 1966-1985, 1970-2000, 1979-2016 թթ., ինչպես նաև 2000 թ. մինչև 2050-2060-ականների ժամանակահատվածները:

1968 թ. Սոսկվայում ոռուերեն հրատարակվեց «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985 թթ. Հայկական ԽՍՀ-ում» տեսական հետաքրքրություն և կիրառական կարևոր նշանակություն ունեցող եռահատոր աշխատությունը (Վ. Խոջաբեկյանի գիտական դեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ): Դրանում առաջին անգամ գիտականորեն կանխատեսվել է հանրապետության բնակչության ու աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը երկարատև հեռանկարում, հիմնավորվել են աշխատանքային ռեսուրսների կազմավորման և պատրաստման ուղիները, մշակվել աշխատանքային ռեսուրսների օպտիմալ բաշխման համապատասխան մեթոդիկա և նորմատիվներ, կազմվել են աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռներ՝ հնգամյա կտրվածքով, հեռանկարային տարիների համար: Հետագա մենագրություններում գիտնականը, ընդհանրացնելով անցյալի փորձը և երկարատև հեռանկարում հանրապետության բնակչության տողական տնտեսական զարգացման արդյունքները, ձեռնամուխ է եղել նորագույն հիմնահարցերի և ավելի լայն ընդգրկմամբ աշխատանքների կատարմանը: Մասնավորապես, 1960-1970-ականների երկու ստվարածավալ մենագրություններում ընդհանրացրել է միմյանց լրացնող և օժանդակող երկու կարևոր ասպարեզներ:

«Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները» մենագրությունը նվիրված է ժողովրդագրության տեսական ու գործնական հարցերին: «Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978 թթ.)» մենագրությունում պատմատնտեսագիտական գրականության մեջ առաջին անգամ բննարկվում են Հայաստանի բնակչության վերարտադրության առանձնահատկությունները, զբաղվածության բնույթի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական զարգացման պատմական ընթացքի 150-ամյա պատկերը, Խորհրդային Հայաստանում բնակչության համահավաքը, զբաղվածության էվոլյուցիան և այլ հարցեր:

1980-ական թթ. Վ. Խոջաբեկյանը ձեռնարկել է մասշտաբների և բովանդակության տեսակետից մի եզակի գիտական մշակում, այն է՝ 1979-2016 թթ. հանրապետության, քաղաքների, շրջանների և գյուղական վայրերի բնակչության (ընդամենը 158 միավոր) հեռանկարային թվի կանխատեսման աշխատանքները: Առաջին անգամ բնակչությունը կանխատեսելիս կոնկրետ գումարելիներից ստացվել է ընդհանուր հանրապետականը քաղաքային և գյուղական կտրվածքով: Երկարատև հեռանկարի յուրաքանչյուր տարիվ համար բնակչությունը կանխատեսվել է ըստ սեռի, տարիքի, աշխատունակության, աշխատանքային և թոշակառու տարիք թևակողմելու և բազմաթիվ այլ հատկանիշներով:

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը Վ. Խոջաբեկյանին հարկադրեց գիտական խնդիրները ներկայացնել նորովի՝ հիմնավորելով լայնամասշտար ժողովրդագրական քաղաքականություն կենսագործելու անհրաժեշտությունը:

«Աղետ և մտահոգություն» մենագրության մեջ բացահայտվել են երկրաշարժի ժողովրդագրական հետևանքները, դրանց ազդեցությունը աղետի գոտում, հատկապես նրա էպիկենտրոնում: Վ. Խոչաբեկյանը հանդես եկավ նոր խոսքով ու գիտական մտահղացումներով՝ աղետյալ շրջաններում ստեղծված իրավիճակի ժողովրդագրական հետևանքները հայթահարելու քաղաքականությամբ և սոցիալական բազմաբնույթ խնդիրները լուծելու հիմնարար առաջարկություններով: Եվ պատահական չէ, որ 1988 թ. դեկտեմբերի 16-ին ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում այդ հարցին նվիրված նրա բոլոր առաջարկություններն արժանացան ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիմկովի հավանությանը: Վ. Խոչաբեկյանի «Արցախը փորձության ժամին» (1991 թ.) մենագրության մեջ գիտական շրջանառության մեջ են դրվում արխիվային նորահայտ նյութեր Նախիջևանում, Լեռնային Ղարաբաղում և ընդհանրապես Աղբքեջանում իրազործվող հայաթափության վերաբերյալ՝ 1920-ական թվականներից սկսած:

Հանրապետության կառավարությանն են ներկայացվել Աղբքեջանից բռնագաղթած հայերի տեղաբաշխման, տարաբնակեցման, զբաղվածության, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական անհետաձգելի խնդիրներին վերաբերող Վ. Խոչաբեկյանի գիտական գեկուցագրերը և հրապարակումները: Դրանցում առաջ քաշված հարցերն ունեն խիստ արդիական նշանակություն և իրենց արտահայտությունն են գտել 1993 թ. մշակված «Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ամրացման» նպատակային ծրագրում:

Վերջին տարիների իր հրապարակումներով Վ. Խոչաբեկյանն ուղղակի ահազանգում է բնակչության նվազման միտումների մասին՝ տալով իր եզրահանգումները Հայաստանի Հանրապետության բնակչությունը գոնե ներկա մակարդակով կայուն բնագծերում պահելու վերաբերյալ: Գիտնականի՝ «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում» աշխատությունում (1998 թ.) տրվում է արդի փլուզման բննադատական վերլուծությունը, ծանր դրությունից ելքի ուղիների որոնումն ու ճշգրտումը: Այս և իր նախորդ աշխատություններում հեղինակը, քննադատելով ՀՀ իշխանությունների քաղաքականությունը, հանդես եկավ հոդի, արտադրության միջոցների անժամանակ, հապշտապ և հախուժն մասնավորեցման դեմ:

Վերջին տասնամյակում հրատարակված ուսումնասիրություններում շեշտադրվում են զբաղվածության և շուկայական էկոնոմիկայի ձևավորման հարցերը, հիմնավորվում է շուկայական էկոնոմիկայի պետական վերահսկման և կարգավորիչ դերի անհրաժեշտությունը: Մեծ տեղ հատկացնելով անցման շրջանում Հայաստանում աշխատանքի շուկան կարգավորող տնտեսական մեխանիզմների մշակմանը՝ գիտնականը բացահայտում է երկիրը ճգնաժամից դուրս բերելու ուղիները՝ առաջարելով անցման շրջանում շուկայի կարգավորման, մշակող արդյունաբերության աշխատատար ճյուղերի զարգացման աճող դերի անհրաժեշտությունը: Արդյունաբերությանը զուգընթաց, նա մեծ ուշադրություն է նվիրել էներգետիկային, գյուղատնտեսությանը, նյութական արտադրության այլ ճյուղերին, ծառայությունների ոլորտին, գիտակրթական,

առողջապահական համակարգերի զարգացման գերակայությանը, արտաքին աշխարհի հետ տնտեսական փոխարժեածման և զբաղվածության հարցերին:

Ազրարային քաղաքականության վերաբերյալ մշակումների համատեքստում բացահայտվել են զյուղատնտեսության զբաղվածության ձևավորման հիմնական ուղղությունները, իրական զբաղվածություն ապահովելու նախադրյալներն ու պայմանները, հիմնավորվել է արդի փուլում զյուղատնտեսության մեջ հայրենական արտադրողների նկատմամբ պետական հովանավորման, խթանման և մրցունակության բարձրացման քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Գյուղատնտեսության մեջ արդյունավետ զբաղվածություն ձևավորելու իմաստով ուշադրություն է նվիրվել արտաքին աշխարհի հետ Հայաստանի զյուղատնտեսության տնտեսական ինտեգրացիայի կառավարման հարցերին: Բացահայտվել են զյուղում տեղի ունեցող արտագաղթը մեղմելու հնարավորությունները:

«Հայաստանի բնակչության վերաբերությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» արժեքավոր մենագրությունը նվիրված է բնակչության աճի և տեղաշարժերի, էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը: Աշխատանքը հայագիտական ուսումնասիրություն է՝ նվիրված ժողովրդագրության, պատմության և ժողովրդական տնտեսության հիմնախնդիրների համապարփակ քննարկմանը: Վիթխարի փաստական նյութի (անցյալի և արդիական) վերլուծության հիման վրա Վ. Խոչաբեկյանը ցույց է տալիս, որ Հայաստանը կանգնած է բնակչության զաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականություն մշակելու փաստի դեմ հանդիման: Հստ նրա, ժամանակավոր արտագաղթն անվերադարձ զաղթի հիմք է դառնում, և վերադարձի խնդիրը առնչվում է ոչ միայն մայր հայրենիքում տեղի ունեցող դրական կամ բացասական տեղաշարժերի, այլև արտագաղթողների սերտածման լեզվի, ազգային մշակույթի, արվեստի, հոգեբանական կերտվածքի և ազգային այլ արժեքների կորստի ու նոր արժեքների ձևավորման հետ, որը ներգաղթը խոչընդոտելու կարևոր նախապայման է: Հստ Վ. Խոչաբեկյանի՝ մոտ ապագայում արտաքին աշխարհից ՀՀ բնակչության ներգաղթի միտումները կարող են կանխորոշվել Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության տևականությունը աստիճանաբար հաղթահարելով, դարաբաղյան հակամարտությունը վերջնականապես հօգուտ Հայաստանի լուծելով, արտաքին աշխարհում հայ անլեզավ զաղթականների նկատմամբ զաղթի քաղաքականության կիրառման ընթացքով, լեզավ զաղթականների աշխատանքային և սոցիալական ապահովածության աստիճանով, ազգային և սոցիալական խորականության որևէ կարգի դրսնորումներով, որևէ ժամանակահատվածում համաշխարհային տնտեսական ձգնաժամի երևան գալով և այլն: Չափազանց կարևորվում է արտասահմանում հայ լեզավ և անլեզավ զաղթականների վաստակի չափը: Հայաստանի շահերը թելադրում են զաղթի ընթացքում այսուհետև ընդգրկվել արտաքին աշխատանքի շուկայում և շուկայի հետ փոխարժեած պետական հիմունքներով: Դա աշխատանքի շուկայի գերլարված իրավիճակից դուրս գալու ուղիներից է, որը հնարավորություն կընձեռի մեղմելու գործազրկությունը, բարձրացնելու աշխատուժի արժեքը,

վերացնելու աղքատությունը, միջին խավ ձևավորելու և դրանցով իսկ արտագործ չափավորելու, հետևաբար, ծնունդը ավելացնելու համար:

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում Վ. Խոջաբեկյանի ղեկավարությամբ մշակվել են նաև մասնագիտական այլ հիմնահարցեր, լույս են տեսել կոլեկտիվ ուսումնասիրություններ, խմբագրվել են թեմատիկ ժողովածուներ: Նրա գործունեությանը բնորոշ է նաև Հայաստանի և արտասահմանի այլ գիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը (Մոլոսաստան, ԱՊՀ և մերձքայլյան երկրներ): Դեռևս 1976-1980 թթ. ՀՍՍՀ ԳԱ և ԳԴՀ գիտությունների ակադեմիաների միջև կնքված երկկողմանի համաձայնագրով ավարտված աշխատանքի արդյունքներն արժանացել են երկու ակադեմիաների բարձր գնահատականին: ԳԴՀ կենտրոնական տնտեսագիտության ինստիտուտի աշխատակիցների և Վ. Խոջաբեկյանի համատեղ գիտական ուսումնասիրությունը՝ «Ժողովրդագրության հիմնախնդիրները և աշխատանքային ռեսուրսների վերաբարությունը», 1983 թ. հրատարակվել է ոռուսերեն (1984 թ. արժանացել է ԽՍՀՄ գիտատնտեսագիտական վարչության նախագահության համամիութենական մրցանակարաշխության դիպլոմին): Խոջաբեկյանի հեղինակած բաժինը 1983 թ. առանձին գրքով լույս է տեսել Բեռլինում՝ գերմաներեն: Իսկ 1999 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից նա արժանացել է «1998 թ. Տարվա մարդ» կոչմանը:

Մոտ կես դար Վ. Խոջաբեկյանը դասախոսել է հանրապետության բուհերում, իր գիտելիքներն անմնացորդ հաղորդել է իր սաներին: Միշտ նրա ուշադրության կենտրոնում է եղել կաղըերի պատրաստման ու վերապատրաստման կարևոր գործը: Նրա գիտական ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել բազմաթիվ ասպիրանտներ ու գիտաշխատողներ: Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանն իր բեղմնավոր գործունեությամբ ստեղծել է հանրապետության ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների գիտական ուղղություն և դպրոց: Նա իրավամբ հանրապետության տնտեսական ժողովրդագրության հիմնադիրն է և շարունակում է դրա գիտական ղեկավարումը:

Վ. Խոջաբեկյանն իր ողջ գործունեության ընթացքում աշքի է ընկել սկզբունքայնությամբ, գիտական բարեխնդությամբ, աշխատասիրությամբ ու պարտաճանաշությամբ: Նա իր հայրենանվեր ստեղծագործական ողջ գործունեությունը նվիրաբերել է ի շահ հայրենիքի, ի շահ տնտեսագիտության: Ահա թե ինչո՞ւ «Գիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների համար» 2003 թ. պարզևատրվել է Մովսես Խորենացու անվան մեդալով, իսկ տարիներ առաջ՝ շքանշաններով, ԽՍՀՄ պետական նախագահության և համամիութենական «Գիտելիք» ընկերության վարչության պատվոգրերով:

Մեծավաստակ գիտնականին մաղթենք առողջություն և նորանոր հաջողություններ:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»  
հանդեսի խմբագրություն